

## ԿԱՏՈՒՆԻ

ՅԱՂԱԳՍ ԲԱՐԻՈԲ ԿԵՆՅԱՋԱՎԱՐԵԼՈՅ  
ԹԵՐԴՄԱՆԵԱԼ Ի ԼԱՏԻՆԵ

ՅԱԿՈԲԱՅ ԴՊԻՐ ՃԱՄՃԻՇԱՏԵ

ԿՈՍՏԱԴԻՆՈՒԹՈԼՍԵՑԱԿՅ Ի ԹՈՒԻՆ ՀԱՅԱՑ

ՌԱԺԿԲ - 1723:

Համառօտ բան թարգմանչին առ,  
դնմթերցողս (1)։

Բաղրամք սուացան զանունն կա-  
տանի։ Առաջին կատանն պլուխ և  
հայր Եղեւ Պորիկիսեան զորմին։ Ծա-  
նմանէ բան վիպուղակսն է այսպէս։  
կատոն էր անուանի ճորտասան։  
քաջ զօրագլուխ և աղիխ խորհրդ-  
գական։ Ամանը եւս զայ քաջ փառ-  
տարան անուանեցին, վասն զի յիւ-  
րումն կենդանութեան քառասուն  
անդամ զիսաստաբանութեան գործս  
արարեալ միշտ անդատապարո գր-  
տառ, զօր առաջի դատաւորոց իր-  
բեւ զմահապարտ քամբասէին։

Երկրորդ կատոնն կոչեցաւ և Պոր-  
կիսա, այլև անուանեցաւ Ձենսուրիս,

(1) Սցն աշխատասիրութեան թարգմանիչն ինչ-  
պէս յիշած է, կաստանդնուպոլիս նառազ Ըստեափ  
թագաւորի գեսապանատան թարգմանն է, պարսն  
Յակովը ճամճի զառու, կոմ ճամճի օղու կոչեցիալ,  
որդի Եղիսայի և Հայուսաննեաց և կեղցւոյ հարու-  
զաւ զաւակ և բարեկամ Կալեան մեծանուն Յա-  
կով պատրիարքին։ որ նարս բարգմանքու հմուտ-  
թենէն օգուտ քաղելու նարտակու քանի մը կոր-  
դրեանք եւս թարգմանել տուած է, որոց մէջ նոր-  
շանաւոր է Կեսոսորի գիլիսափայութիւնը ին գրւ  
խով, զօր թարգմանած եւ յիշեալ հանգուցեալ  
պատրիարքին նու իրած է առանձին ուղերձով մը  
1743 թռւականին։ Անը, ինչպէս առաջիկայ թարգ-  
մանութեան մէջ կ'երեւի, իւր դարսուն ոճն է, և  
իւր պարզութեանը առաւելութիւն մը ունի գէթ,  
բայց ինչպէս իւր ուղերձին մէջ կը խստավանի,  
իւր պաշտօնին թանկարգին ժամանակէն գողած  
ըլլուվ, չէ կարողացած վերջն որբագրութիւն-  
ներն ընել իւր թարգմանութեանցը։ Վերըշեալ  
Կետանի թարգմանութեան ինքնազիր օրինակը  
սուրբ Աթոռոց գրքատան մէջ կը գտնուի, հիշ 55։

այսինքն քաղաքուգրիչ դատաւոր։ Եղ-  
նա ՚ի հուսկուլոյ գեղջէն մերձ ՚ի  
Հռովմ, վերացաւ սա ՚ի բազմասպա-  
տիկ իշխանութիւն, զի նախ եղեւ  
արիրուն, այսինքն ժողովրդապետ  
Ավելիլից, յետոյ զօրագլուխ եղեալ  
էաւ զիջպին Ուղինոյ։ անդ թէպէտ  
ծերացյալ ուսաւ զօհունաց բառան  
՚ի Ծեննիսէ, իսկ հուսկ յետոյ բը-  
դեշին եղաւ ՚ի Հռովմ։ Այս կա-  
տոն է զորմէ տեսն թէ ՚ի վերաց երից  
իրաց զիջացեալ իցեւ յիւրամին կեն-  
գանութեան։ նախ՝ վասն նաւով  
գնարց անդր՝ ուր հնար էր ուսիւքն  
գնալ, երկրորդ՝ վասն երբէք ան-  
ցուցանելցն զօր մի պարագ, երրորդ՝  
վասն յայտնելցն զգազանի խորհուր-  
դը, կնոջ իւրում։ Ամա եղեն որ-  
դիք երկու, որոց մինն քաջապէս  
պատերազմեցաւ ընդդէմ Պիերուին։  
Այսոն որ Աովնոս անուանեցաւ ՚ի  
մօրէն, մեռաւ ՚ի կենդանութեան  
հօր իւրոյ։ Պրեաց գիրս ապնուա-  
գոյն ՚ի վերաց իրաւագիտութեան։

Երրորդն է Անրիս կատոնն որ  
էր ՚ի քաղաքէն Յուղեայ և թռոն-  
որդի Պորիկիսաֆ։ Յովիրութիւն եղեալ  
էր սմա գնալ երբեմն մերկ ոսիւք ՚ի  
մէջ ժողովրդեան, և երբեմն կարձ  
հանդերձիւք երեւէր ՚ի մէջ նոցա,  
այսր ամենայնի առբերէր զպատճա-  
ռըն ինքն առելով այսպէս։ Օի կամիմ  
սովորեցուցանել զիս յանվայելուչ մի-  
այն իրացն պատկառիւ։

Չորրորդ և վերջին կատոնն որ  
Ա աղերիկոս մականուանեցաւ, էր  
քերթողաբան և բանաստեղծ, որ ու-  
սուցաներ զբացում որդիս մեծամեծ  
արանց ՚ի քաղաքն Հռովմ։ Աս եղեւ  
շարագրով ներկայ Ատանաւոր գրոց  
հոմերական ոսնաւափութեամբ զօր  
ես յետին ՚ի բանաստեղծից ՚ի մեր  
լըզուս շարագրեցի, վասն այնիր մա-

նաւանդ պատճառին զի ինձ երեւեցաւ յոյժ գեղեցկայտմար առ ՚ի ուղղել զրաբս երիտասարդացքիատունէից : Խակ քանիզի (Են) բառք ունանք ՚ի մէջ ուսունաւորացս զրս թերեւս իմանալ չլցէ հնար ամենեցուն , և վասն Հռովմէական քաղաքավարութեան յանձնառի պատճել զնուցանէ : Առաջին բառն է Բաղդէն՝ որ կոչի ըստինեցուր ֆոռիուն՝ եւ յունարէն՝ Ռէկ , և տաճկէվորն ֆէլէկ : Պատկերահանքն նկարագրեն զի՞աղդն իբրեւ զմատաղ և զմատղաշ անաչ աղջիկ մին ունելով ՚ի ձեռին զննիւ մի զրս անդադար գլորմամքն հոլովէ : Անաչ նկարագրեն զիս , վասն զի ոչ բառ արժանեացն իւրաքանչեւր ումեք մարդոյ բաշխէ զյաջողութիւննս . քանիզի տեսանեմք օր ըստ օրէ և բաղմիցս զանարժան անձին լինել ՚ի մէջ յաջողութեանց և գործակալ տեսանեմք զարժանին կողյաղբատութեան և յանաջողութիւն . զի անաչառ լինելով չկարէ տեսանել զարժանաւորութիւնն եւ զանարժանութիւնն : Ունի եւս ՚ի ձեռին իւրամ անիւ մի : Ո՞իսո ոյս նշանակէ զաջողութեանց անհաստատութիւն : Քանիզի տեսանեմք բաղմիցս զրս ՚ի յինչը և ՚ի փարթամնութիւնս բարձրացեալ գլորիլ և անկանիլ ՚ի դառն աղբատութիւն և ՚ի մեծ թշուառութիւն , և զրս ՚ի դառն աղբատութեան վերանուլ ՚ի փարթամնութիւն : Պատճառն է զի գլորելով Բաղդին զննիւն , գլորին ընդ անուցն և ՚ի վայր իջանեն որք եին ՚ի վերին կողմն անուցն . եւս թէ վերացեալ բարձրանան ստորեւ կողմունքն : Վասն այսր պատճառիս ասեն փաստարանքն թէ որպէս անդադարէ գլորումն անուցն նոյնալեսանհաստատ յաղբատութիւն եւ փարթամնութեան

կացութիւնք : Արկրորդ բառն է ՚Վէպ ժամն (առ իմէ) , որ կոչի ըստինէվոր օկտավուն , և յունարէն աֆրամ , և տաճկէվոր ֆրանտ , զրս պատկերահանքն նկարագրեն իբրեւ զարտգագնաց կոյսաղջիկ մի , որ զառաջնին կողմն (ունի) լի հերովք , և զյետինն հերաթափի , Վասն որց երբ հանդիսի զնալ ՚Վէպ ժամն , պարտէ մեզ գըր . կել զնա , և ձեռամբ ըմբռնել զվարմիցն նորա , զի գիտացուք զօդտակարութիւնն , Վթէ ոչ ըմբռնեմք զնա , անցանէ և ոչ եւս կարեմք ՚ի ձեռս ձեկէլ զնա՝ զի հերաթափի է յետին կողմն զլացն : Վյո երկու բառքըս են զրոց պատճել ստկաւ բանիւննէն ինձ հարկ եղեւ : Երդ սիրովըսա (ընկալարուը) և վայելցէք ՚ի փառս Քրիստոփի և անձանցդ յօդտութիւն . և ողջ լերուք ՚ի տէր :

Յառաջաբանութիւնն չարադրովին :

Տեսանելով զբաղումն ՚ի մարդկանէ ՚ի շաւղացն բարի վարուց յոյժ մոլորեալ , ինձ համարեցի հարկ ցուցանել կերպիւ իւեր զթիւր ճանապարհս , զի ազնուապէս կենցաղավարելով զինքեանս պատառելիս արասցեն : Աւրեմն , որդեակ իմսիրելիս պատուերս ՚ի քէնէ պահելիուուցոցից քեզ զիերոլ բարւոք կելոյ եւ կենցաղավարելոյ . ընթերցիր մեծաւ մտադրութեամբ զհետեհալ պատուերս իմ զի կարասցես իմանալ զամենոցն , և գիտացիր ստուգիւ՝ զի ընթեռնուլն և չլիմանալն զանց առնելէ . վասն որոյ զի՞ատուած աղաչեա , զծնողս պատուեա , զազգակիցս սիրեա , երկիր ՚ի վարժապէտէ . քեզ աւանդեալն պահեա . պատրաստեա զքեզ յատենի . ընդ բարիս զնա . ոչ հրաւիրեալ մի երթար ՚ի խորհուրդ . միշտ լեր մաքուր .

յօժարութեամբ տուր զողջոյնն։ Հը նազանդ լեր մեծագունից ։ Ներեա փոքրագունից ։ զիրդ քո պահեա, ըլ գրեանդ ընթերցիր, զընթերցեալն մի մռաանար ։ հոգ տար տան քում ։ լեր հեղ և խնարհ ։ անպատճառ մի բարկանար, մի զըք արհամարհեր, զեղկելէօք մի ծիծաղիր ։ Փախ տուր, տես ում տացես ։ արդարութեան հետեւեսջիր, մի ստէալ խրախմանս առնիցես, ննջելդ բաւականօրէն, զուխասքու պահեա, լեր սակաւ արրիչ, պահեա զպարկեշտութիւն, վասն հայրենեացդ պատերազմեա, միր լեր և ոչ հեղդ։ Խնդրեա զանմալար խրատս, փախիր յանսպարկեշտ կանանց ։ ամենենին մի ստեր, բարեացն բարի ասա, մի լինիցիս չարախոս ։ զհամբաւդ մի կորուսաներ, ուղիղ դատեա ։ զծնողս համբերութեամբ յաղթեա, մի լինիր երախտամուաց, գնաա ՚ի ժողովն հըմտագունից, այսինքն ՚ի ծերակոյան ։ առ և տուր զիրատ ։ Բարկութիւնդ գադարեցու, ստացիր զառաքինութիւն, մի ինչ վշրապար հաւատացես, մի ինչ անմուռթեամբ արտացես՝ յուսալով ՚ի զօրութիւնդ ։ փախիր ՚ի խազուլց վէկս, պարկեշտ խազօր շատացիր ։ Քան զքեղ փոքրագոյնն մի քամահեր, օսար բարեաց մի ցանկոր, սիրեա զիրզակիցդ, գիտունս արա զորդիսդ ։ նախ լեր գու ՚ի ներքոյ օրինաց զօրս դու հաստատեցեր, ՚ի մէջ ընթրեաց լեր ստկաւախօս ։ իրաւանց զհետքնա, և յօժար սիրով սիրեա ։

(Ը բունակել)։

ՄԵՆԱՊՈՅԻ ԺՈՂՈՎ

(Հարուշակութիւն, տես թիւ 84)

Վհ, ինչպէս խխան է պատժւում շատ անգամ զպարգայման և կամաց կրթուերաց թողնիլը, Այս տեղից է շատերի այս անընդ դիմակալ փոխարկութիւնը՝ փոփխակի զգացմունքներու մ ։ այս կախումը այս ներդաշնակութիւններից (Stimmungen), որոնք ինչպէս մի նուագարանի՝ կապակցութիւն ունին եղանակի հետ, կամ քմահաճացքներից (1), որոնք լուսնի նման փոփխուումնեն, և բոլորի հետ միասին ինքնամանաց զգացման գրգռիլը, որ ամենտեղ առիթ է գտնում իրան յանցաւոր, յետ ընկած և տարաբազդ համարելու, կեանքի վրայ սիրտ չունենալը, որով սիրտը ամեն բանից ստասափում է և իրա մէջ ոչ մի հնարչ գանում ընդդիմակալելու։ Ծատանգամ այս մասին է պակաս ինքնիշխանութեան բոլը սրարողական զօրութիւնը, որ մարդ սովոր է միայն իրա համար ապրելու և ոչ մի ժամանակ ուրիշի։ « Դմ տարաբազդութիւննին էր, որ ուզում էի թէ՝ ամենքը ինձ սիրեն՝ տուանց իմ միայն մի հատանձը սիրելուն ո, մի հոգի է խսոսովանել, որը մնափառութիւնից և անգադար շվջանող աշխարհային ցանկութիւնից թշուառ չորչապահներ կրելուց յետոյ՝ կրկին իրան գտաւ, իրա մեծահոչ չակ ինչը։

Ոի շատ փորձուած բժիշկ՝ մեր և այլ ժամանակի կանանց հոգեկան ցաւերի պատճառները՝ սյժմեան ջերմաւ

(1) Այս բառը թարգմանուած է գերմ. (Laune) բառից, առ Լատիներէն (Luna) բառիցն է առաջացել, որ նշանակում է լուսն, ուրեմն խկզքանէ լուսնի հետ է համեմատել այս կարողութիւնը և նրանից էլ անուն ստացել։